ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը բացվեց դեկտեմբերի 24-ի երեկոյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի ընդարձակ սրահներից մեկում՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ:

Նիստին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ Տ. Գևորգ արքեպս. Սերայդարյանը, Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Անանիա արքեպս. Արաբաջյանը, Տ. Պարգև եպս. Մարտիրոսյանը, Տ. Աբրահամ եպս. Մկրտչյանը, տիար Գրիգոր Խանջյանը, տիար Ռաֆայել Պապայանը, տիար Վլադիմիր Բարխուդարյանը:

Նիստը բացվեց աղոթքով, որից հետո փոխանորդ Սրբազան Հայրը ողջունեց Խորհրդի ներկա անդամներին՝ շնորհակալություն հայտնելով ժողովին իրենց մասնակցությունը բերելու համար: Այնուհետև Գարեգին Սրբազանը տեղեկություններ հաղորդեց Վեհափառ Հայրապետի առողջական վիճակի մասին՝ ավելացնելով, որ Նորին Սրբությունն ամենայն հավանականությամբ Մայր Աթոռ կվերադառնա փետրվարի կեսերին:

Շարունակելով խոսքը՝ կաթողիկոսական ընդհանուր փոխանորդը տեղեկություններ տվեց իր նշանակման, հանրապետության նախագահի հետ հանդիպման, իր կողմից հրավիրված մամլո ասուլիսի, ինչպես նաև երկրաշարժի 10-ամյա տարելիցի պետական և եկեղեցական միջոցառումներին Մայր Աթոռի մասնակցության մասին: Նշվեց, որ միջոցառումներին մասնակցեցին Հռոմեա-Կաթոլիկ և Ռուս Եկեղեցիների ներկայացուցիչները:

Խորհուրդն անդրադարձավ Եկեղեցու ներքին կյանքին, առանձին հոգևորականների առջև ծառացած խնդիրներին, դրանց կարգավորման ուղիներին: Որոշվեց այդ ուղղությամբ արված առաջարկները ներկայացնել Վեհափառ Հայրապետին՝ առ ի քննություն և տնօրինություն:

Գարեգին Սրբազանը տեղեկացրեց նաև առաջիկայում Հռոմում, Ժնևում և Մոսկվայում կայանալիք միջեկեղեցական հանդիպումներին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մասնակցության մասին:

Ապա իրենց հակիրճ զեկույցները ներկայացրեցին Մայր Աթոռի վարչա-տնտեսական բաժնի կառավարիչ տիար Ներսես Կարամանուկյանը և գլխավոր հաշվապահ տիար Հարություն Մելյանը:

Որոշվեց առանձին քննարկման նյութ դարձնել հարկային քաղաքա-

կանության հարցը և այդ քաղաքականության մեջ Հայ Եկեղեցու իրավունքների ու արտոնությունների խնդիրը՝ առաջարկները ներկայացնելով Ազգային Ժողով և կառավարություն:

Այնուհետև փոխանորդ Սրբազան Հայրը խոսեց Ամանորյա և Սուրբ Ծննդյան հանդիսություններին Մայր Աթոռի նախապատրաստական աշխատանքների, մասնավորապես ԶԴՔԿ-ի կողմից Արամ Խաչատրյանի անվան ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում կազմակերպվելիք հանդիսությունների և Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպվելիք Սուրբ Ծննդյան հանդիսության մասին:

Անդրադարձ եղավ նաև Մայր Աթոռ կատարված պաշտոնական այցելություններին, քարոզչական աշխատանքների աշխուժացման խնդրին (մասնավորապես՝ Արմավիրի թեմում): Նշվեց, որ աշխատանքներ են տարվում ժողովրդի կյանքում տնօրհնեքի իմաստալից ավանդույթը վերականգնելու ուղղությամբ:

Քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարության կազմակերպմանը ևս անդրադարձավ խորհուրդը՝ առանձնակի շեշտելով այն բազմաբնույթ ու բազմաբովանդակ դարձնելու անհրաժեշտությունը:

Լուսաբանվեց նաև Երևանի Մայր եկեղեցու շինարարական աշխատանքների ընթացքը, իսկ Սրբազան Հոր հորդորով առաջարկվեց այդ խնդրի հետ առնչվող մտահոգություններով դիմել տաճարի շինարարության վերահսկիչ պարոն Բալասանյանին, քանի որ Վեհափառ Հայրապետի բարձր կարգադրությամբ շինարարության վերահսկողությունը կատարում է վերջինս:

Այսքանով Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստն ավարտեց իր աշխատանքները:

ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ